ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2013

Տարեկան հաշվետվություն

Բովանդակություն

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի մասին.....3

2013թ.-ին իրականացված ծրագրեր.....5

Գործողություններ.....9

Ուսուցումներ և վերապատրաստումներ.....9

Ռազամավարական դատական գործեր.....10

Հանրային քարոզարշավ.....15

Խորհրդատվություն քաղաքացիներին և լրագրողներին.....18

ՏԱ օրենսդրության կիրառման և կառավարման համակարգի հրապարակայնության մոնիտորինգ.....18

Միջոցառումներ.....19

Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2001թ.-ի հունիսի 1-ին Երևանում մի խումբ լրագրողների և իրավաբանների կողմից: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հիմնական առաքելությունն է պաշտպանել քաղաքացիների տեղեկություն ստանալու իրավունքը:

ԻԱԿ-ի հիմնական նպատակներն են

- Նպաստել բաց և թափանցիկ կառավարման համակարգի ձևավորմանը և քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:
- Նպաստել տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենսդրության կիրառմանը:

ԻԱԿ-ի գործունեության ուղղություններն են

- **Իրավական խորհրդատվություն և դատական պաշտպանություն**

ԻԱԿ-ը քաղաքացիներին, ՁԼՄ-ներին, ՀԿ-ներին, լրագրողներին և իրավաբանական անձանց իրավական խորհրդատվություն է տրամադրում տեղեկատվություն ստանալու իրավունքի վերաբերյալ՝ միաժամանակ օգնելով բողոքարկել տեղեկատվություն ստանալու հարցումների անօրինական մերժումները՝ ներառյալ դատարական կարգով: 2013 թ.-ին ԻԱԿ-ը տեղեկատվություն ստանալու իրավունքի վերաբերյալ իրավական խորհրդատվություն է տրամադրել երկու հարյուրից ավելի քաղաքացիների, ՁԼՄ և ՀԿ ներկայացուցիչների՝ միաժամանակ օգնելով բողոքարկել տեղեկատվություն ստանալու հարցումների անօրինական մերժումները՝ ներառյալ դատարական կարգով: 2013 թ.-ին ԻԱԿ-ը նախաձեռնել է 4 դատական գործ: Դեկտեմբերի 31-ի դրությամբ նշված գործերից 3-ը ընթացքի մեջ են, մեկն ավարտվել է ԻԱԿ-ի հաղթանակով: ԻԱԿ-ի ավելի վաղ նախաձեռնած ևս 3 գործ այս տարի ավարտվել են ԻԱԿ-ի հաղթանակով կամ կողմերի միջև հաշտությամբ: Այսպիսով, տարվա ընթացքում ավարտվել է չորս դատական գործ՝ բոլորն էլ հօգուտ խախտված տեղեկություն ստանալու իրավունքի վերականգնման:

- **Ուսուցումներ**

ԻԱԿ-ը ՀՀ ողջ տարածքում ուսուցումների միջոցով օգնում է քաղաքացիներին, ՀԿ, ՁԼՄ և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին, ինչպես նաև պետական պաշտոնյաներին զարգացնել իրենց գիտելիքը և հմտությունները ՏԱ ոլորտում: 2013 թ.-ին ՏԱ օրենսդրության մասին իրենց գիտելիքները հարստացրել են 78 քաղաքացիական և 30 համայնքային ծառայող, 50 ՀԿ և ՁԼՄ ներկայացուցիչ և 4 իրավաբան:

- **Հանրային քարոզարշավ**

2001թ.ից մինչ օրս ԻԱԿ-ն իրականացնում է հանրային լայն քարոզարշավ տեղեկատվության ազատության խնդիրներին հանրությանն իրազեկելու նպատակով: Կենտրոնը հրապարակում է «Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիրը, որը ՏԱ ոլորտի մասին միակ մասնագիտացված պարբերականն է Հայաստանում: Տեղեկագրի յուրաքանչյուր համարում հրապարակվում է այն պաշտոնյաների «Սև ցուցակը», որոնք ոտնահարել են քաղաքացիների, լրագրողների, ՀԿ-ի և իրավաբանական անձանց տեղեկատվություն ստանալու իրավունքը: Կենտրոնն իր տարեկան Սև ցուցակին զուգահեռ հրապարակում է նաև տարեկան Սպիտակ ցուցակ: Բոլոր այն գերատեսչությունները, որոնք Սև ցուցակներում հայտնվելուց հետո վերանայում են ՏԱ ոլորտում իրենց գործունեությունը և բարեփոխումներ իրականացնում տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով, այլևս չեն ընդգրկվում Սև ցուցակում: Այդ գերատեսչություն-

ներն ու նրանց ղեկավարներն ընդգրկվում են ԻԱԿ-ի ամենամյա Սպիտակ ցուցակում: 2013թ.-ին Կենտրոնը հրապարակել է «Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագրի 2 համար: Ավանդույթի համաձայն՝ 2013թ.-ին ևս իրականացվեց ՏԱ ոլորտի հանրային քարոզչության կարևորագույն միջոցառումներից մեկը՝ «Ոսկե բանալի, ժանգոտ կողպեք» ամենամյա մրցանակաբաշխությունը: 2013թ.-ին ԻԱԿ-ը հրապարակել է նաև 2 գիրք, որոնք ամփոփում են նախորդ երկու տարիների՝ կազմակերպության գործունեությունը ՏԱ ռազմավարական դատավարության և տեղեկատվական վեճերի արտադատական կարգավորման ոլորտներում:

Օրենսդրական բարեփոխումներ

ԻԱԿ-ն ակտիվ դերակատարում է ունեցել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի մշակման և ընդունման գործում: Ներկայումս ԻԱԿ-ը նախաձեռնել է ՏԱ օրենսդրության բարեփոխումների երկրորդ սերնդի մշակման և ընդունման գործընթացը: ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ ԻԱԿ-ը վերլուծել է տեղեկատվության ազատության ներկայիս պրակտիկան, վերհանել իրավական բացերը եւ դրանք լրացնելու նպատակով ՀՀ ԱԺ-ի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի հետ համատեղ մշակել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծ, ինչպես նաև ՏԱ իրավունքին առնչվող՝ «Պետական տուրքի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքներում և «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին օրինագծեր:

ՏԱ օրենսդրության կիրառման և կառավարման համակարգի հրապարակայնության մոնիտորինգ

ԻԱԿ-ն իրականացնում է ՏԱ մասին ՀՀ օրենսդրության կիրառման պրակտիկայի մշտական դիտարկում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տարեկան շուրջ 500 տեղեկություն ստանալու հարցումներ է ուղարկում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ այսպիսով լինելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ամենաակտիվ օգտագործող կազմակերպություններից մեկը:

Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնության մասնակցություն

ԻԱԿ-ն ակտիվորեն ներգրավված է «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության գործընթացներին: Կենտրոնի ծրագրերի ղեկավար, փորձագետ Լիանա Դոյդոյանն ընդգրկված է ԲԿԳ-ում ՀՀ մասնակցության գործողությունների ծրագրից բխող աշխատանքները համակարգող աշխատանքային խմբում, որը կազմավորվել է 2012թ. սեպտեմբերին ՀՀ Վարչապետ Տ. Սարգսյանի որոշմամբ: Աշխատանքային խումբը 2013թ.-ին մշակել է ԲԳԿ-ում 2014-2016թթ. Հայաստանի գործողությունների պլանի նախագիծը: ԻԱԿ-ի նախաձեռնությամբ և ջանքերով 2013-ին գործարկվեց ԲԿԳ-ի հայաստանյան պաշտոնական կայքէջը՝ www.ogp.am: Իսկ ԻԱԿ-ի և ՀՀ կառավարության համատեղ աշխատանքի արդյունքում 2013թ.-ի հունիսի 14-ին Երևանում անցկացվեց «Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» առաջին միջազգային համաժողովը: ԻԱԿ-ը ոչ միայն մասնակցում է ԲԿԳ շրջանակում Հայաստանի ստանձնած գործողությունների իրականացմանը, այլև հետևողականորեն դիտարկում է ՀՀ ստանձնած հանձնառությունների իրականացման գործընթացը:

2013թ.-ի ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն իրականացրել է 7 ծրագիր՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, ԵԱՀԿ Երևանի գրասենյակի, ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության, Քաունթերփարթ Ինթերնեշնլ կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության, Բելգիայի Թագավորության ներքին գործերի նախարարության, ՄԱԿ-ի փախստականների գլխավոր հանձնակատարի երևանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

1 Թրաֆիքինգի և դրա դեմ պայքարի լուսաբանման ամենամյա մրցանակաբաշխություն-2013

2013թ.-ի փետրվար-հունիս ամիսներին ՄԱԿ-ի փախստականների գլխավոր հանձնակատարի երևանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ ՀՀ-ում Թրաֆիքինգի հարցերով խորհրդի հետ համատեղ ԻԱԿ-ն իրականացրել է «Թրաֆիկինգի և դրա դեմ պայքարի լուսաբանման ամենամյա մրցանակաբաշխություն-2013» ծրագիրը, որը նպատակ ուներ խրախուսելու թրաֆիքինգի դեմ պայքարի լուսաբանումը և բարձրացնելու հանրության իրազեկության մակարդակն այդ երևույթի, դրա դրսևորումների մասին: Հունիսի 6-ին տեղի ունեցավ Թրաֆիքինգի և դրա դեմ պայքարի լուսաբանման մրցանակաբաշխությունը, որն անցկացվում է արդեն երկրորդ անգամ: Մրցույթին ներկայացվել էին 2012 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 փետրվարի 28-ը հրապարակված թրաֆիքինգի և դրա դեմ պայքարին վերաբերող տպագիր, առցանց լրագրողական նյութերը, ինչպես նաև ռադիո և վիդեո արտադրանք: Ներկայացված աշխատանքները գնահատել է մասնագիտական ժյուրին, որը կազմված էր թրաֆիքինգի հարցերով ազգային փորձագետներից և լրագրողական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

<u>«Հեռուստատեսություն և ռադիո» անվանակարգի հաղթողներն էին.</u>

1-ին տեղ՝ Անուշ Մկրտչյանը, «Ազատություն» ռադիոկայանի լրագրող, «Թող հավատան, որ կյանքը սրանով չի ավարտվում» ռադիոնյութի համար,

2-րդ տեղ՝ Դիանա Ավետիսյանը, «Սոցիալական ցանցերը կարող են դառնալ թրաֆիքինգի ցանցեր» սոցիալական տեսահոլովակի համար,

3-րդ տեղ՝ Անի Մանուկյանը՝ «Ստրկությունից մինչեւ թրաֆիքինգ» սոցիալական տեսահոլովակի համար:

<u>«Տպագիր և առցանց լրատվամիջոցներ»</u> անվանակարգում ժյուրին առաջին տեղ չէր շնորհել:

2-րդ տեղ՝ Վահան Իշխանյանը, «Հայաստան. ստրկությունը 21-րդ դարում կամ թրաֆիքինգ» հրապարակման համար,

3-րդ տեղ՝ Աստղիկ Կարապետյանը, «Երկիր" պարբերականի լրագրող, «Ուզում եմ թրաֆիքինգի զոհ դառնալ» նյութի համար:

Նշենք, որ ժյուրիին ներկայացվել էր շուրջ 40 աշխատանք:

2 Անկանոն միգրացիայի լուսաբանման մրցանակաբաշխություն

2013 թվականի փետրվար-հունիս ամիսներին իրականացվեց նաև Անկանոն միգրացիայի լուսաբանման մրցանակաբաշխությունը՝ Բելգիայի Թագավորության ներքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ: Մրցանակաբաշխության նպատակն էր խրախուսել ՀՀ-ից սկիզբ առնող անկանոն միգրացիայի կանխարգելմանն ու պոտենցիալ միգրանտների շրջանում իրազեկվածության բարձրացմանն ուղղված թեմաների լուսաբանումը զանգվածային լրատվամիջոցներով: Մարտի 15-ին տեղի ունեցավ Անկանոն միգրացիայի լուսաբանման մրցանակաբաշխությունը: Նախապես հայտարարված մրցույթին ներկայացվել էր 2012 թ.-ի հունվարի 1-ից մինչև 2013 թ.-ի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում հայաստանյան տպագիր, առցանց և էլեկտրոնային լրատվամիջոցներում հրապարակված շուրջ 50 լրագրողական նյութ:

Անկանոն միգրացիայի լուսաբանման մրցանակաբաշխության հաղթողներն էին.

Առաջին տեղ- Երանուհի Սողոյանի Hetq.am կայքում տպագրված հոդվածաշարը

Երկրորդ տեղ - Լիլիթ Ավագյանի "168 ժամ" կայքում տպագրված "Ավելորդը" հոդվածը

Երրորդ տեղ - Հասմիկ Բաղալյանի "Հրապարակ" օրաթերթում տպագրված "Ցատկ Եվրոպայում կամ օտարության փորձությունը" հոդվածը:

Հաղթողներին տրվեցին վկայագրեր և դրամական պարգևներ. առաջին տեղի համար 1000, երկրորդ տեղի համար՝ 500 և երրորդ տեղի համար՝ 300 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

3 Տեխնիկական աջակցություն Տեղեկատվական վեճերի խորհրդին

ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացրել է «Տեխնիկական աջակցություն Տեղեկատվական վեճերի խորհրդին» ծրագիրը:

Ծրագրի հիմնական նպատակն էր ամրապնդել Տեղեկատվական վեճերի խորհրդի տեխնիկական կարողությունները՝ ընդլայնելով դրա արդյունավետությունը որպես արտադատական մարմին լրատվամիջոցների հետ կապված վեճերի այլընտրանքային լուծում ներկայացնելու հարցում: Ծրագրի տևողությունը՝ 4 ամիս (մայիս-օգոստոս 2013թ.):

Ծրագրի գործողություններն էին.

- Վիրավորանքի և զրպարտության հետ կապված 6 դատական գործերի վերաբերյալ փորձագիտական կարծիքների պատրաստում և հրապարակում:
- Աշխատանքային քննարկման կազմակերպում՝ լրագրողների եւ իրավաբանների մասնակցությամբ՝ ներառյալ նրանց, ովքեր ներգրավված են խոսքի ազատության վերաբերյալ դատական գործերում:
- ՏՎԽ պաշտոնական ինտերնետային կայքի պարբերաբար թարմացում,
- ՏՎԽ կարծիքների ժողովածուի երկրորդ հատորի մշակում և տպագրություն:

4 «Մամուլի ազատություն, տեղեկություն ստանալու իրավունք» ֆոտոցուցահանդես

ԻԱԿ-ը ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության եւ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի համատեղ աջակցությամբ 2013թ. մայիսի 3-ին Մամուլի ազատության միջազգային օրը արդեն երրորդ անգամ կազմակերպեց «Մամուլի ազատություն, տեղեկատվություն ստանալու իրավունք» ֆոտոցուցահանդեսը: Մեկ շաբաթ տեւած ցուցահանդեսի նպատակն էր անդրադառնալ մամուլի եւ տեղեկատվություն ստանալու իրավունքի խոչընդոտներին ու հնարավորություններին, կառավարությանը, մամուլի ներկայացուցիչներին ու ողջ հասարակությանը հիշեցնել այս իրավունքի իրականացման գործում իրենց դերի մասին: Ցուցադրված 70 լուսանկարներն ու ծաղրանկարները հրապարակվեցին մամուլի ազատության համաշխարհային օրվան նվիրված հատուկ ֆոտոկատալոգում:

5 Տեղեկատվության մատչելիությունը համայնքային մասնակցության համար

Մինչև 2013թ. նոյեմբեր ամիսը շարունակվում էր ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «Տեղեկատվության մատչելիությունը համայնքային մասնակցության համար» 5-ամյա ծրագիրը (2008-2013թ.թ.): Այս ծրագրի հիմնական խնդիրներն են նպաստել մարդկանց մասնակցությանը համայնքային կառավարման և հանրային խնդիրների լուծման գործընթացներին, ինչպես նաև տեղեկատվության մատչելիության արդյունավետությունը բարձրացնելու միջոցով խթանել բաց և թափանցիկ կառավարման համակարգի ձևավորումը:

Ծրագրի շրջանակում ԻԱԿ-ը 2013թ. ընթացքում իրականացրել է հետեւյալ գործողությունները.

- 78 քաղաքացիական ծառայողների ուսուցում տեղեկատվության ազատության օրենսդրության վերաբերյալ:
- «Մամուլի ազատություն, տեղեկատվություն ստանալու իրավունք» խորագրով 3-րդ ֆոտոցուցահանդեսի կազմակերպում մայիսի 3-ին՝ մամուլի ազատության միջազգային օրվան նվիրված, ցուցահանդեսի լուսանկարների և ծաղրանկարների կատալոգի տպագրություն:
- «Ոսկե բանալի, ժանգոտ կողպեք» տեղեկատվության ազատության ամենամյա մրցանակաբաշխության անցկացում սեպտեմբերի 28-ին՝ Տեղեկատվության ազատության միջազգային օրը:
- Ռազմավարական դատական 4 գործերի ստեղծում:
- «Տեղեկատվություն ստանալու իրավունք. դատական գործերի ժողովածու 2011-2013» թվով 3-րդ գրքի մշակում և հրապարակում:
- Մասնակցություն Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնության Հայաստանի գործողությունների պլանի պատշաճ իրականացմանը, կիրառման արդունավետության դիտարկում: «Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» առաջին միջազգային համաժողովի իրականացում 2014 թ. հունիսի 14-ին,
- ԲԿԳ հայաստանյան պաշտոնական կայքի ստեղծում և պահպանում:
- «Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագրի 2 համարի հրապարակում:

6 Նախընտրական քարոզչության լուսաբանման որակական մոնիտորինգ

ԱՄՆ ՄԶԳ մարդասիրական ծրագրեր իրականացնող Քաունթերփարթ Ինթերնեշնլ կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության ֆինանսական աջակցությամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իր գործընկեր Կովկասի ինստիտուտ ՀԿ-ի հետ համատեղ իրականացրեց Երևանի 2013թ.-ի ավագանու ընտրություններին մասնակից կուսակցությունների նախընտրական քարոզարշավի լուսաբանման որակական վերլուծություն: «Նախընտրական քարոզչության լուսաբանման որակական մոնիտորինգ» ծրագիրի նպատակն էր պարզել, թե որքանով են առցանց լրատվամիջոցները ընտրողին իրազեկ որոշումներ կայացնելու հնարավորություն տվել: Որպես ծրագրի արդյունք կազմվել է համապարփակ զեկույց, որը ներկայացվել է շահագրգիռ կողմերին եւ տարածվել առցանց լսարանում: Ծրագրի տեւողությունը՝ 1 ամիս (ապրիլ 15 - մայիս 15, 2013):

Ծրագրի նպատակին հասնելու համար ԻԱԿ-ը եւ իր գործընկեր ԿԻ-ը.

- իրականցրել են առցանց լրատվամիջոցներով նախընտրական քարոզարշավի լուսաբանման դիսկուրս վերլուծություն,
- գնահատել են, թե արդյոք առցանց լրատվամիջոցները հնարավորություն են ունեցել նախընտրական քարոզարշավի ընթացքում ազդել քաղաքացիների՝ գիտակցված ընտրություն կատարելու որոշման վրա:
- Որպես ծրագրի արդյունք կազմվել է համապարփակ զեկույց, որը ներկայացվել է շահագրգիռ կողմերին եւ տարածվել առցանց լսարանում:

7 Համակարգային զարգացման նորարարություններ

2013թ. իրականացվել է նաեւ Քաունթերփարթ Ինթերնեշնլի կողմից ֆինանսավորվող «Համակարգային զարգացման նորարարություններ» ծրագիրը, որի նպատակն է բարձրացնել ԻԱԿ-ի կազմակերպական կարողություններն ու արդյունավետությունը: Ծրագիրը իրականացվում է ուսուցումների, խորհրդատվությունների, փորձի փոխանակման և ծառայությունների մատուցման համադրության միջոցով: Ծրագրի տևողությունը՝ 10 ամիս (հունիս 2013 - մարտ 31, 2014):

Համակարգային զարգացման 10 ամսյա ծրագրի նպատակն է բարձրացնել ՀԿ-ի կազմակերպական կարողությունները և արդյունավետությունը: Ծրագիրն անդրադառնում է առաջարկների ներկայացման հրավերում ամրագրված հետևյալ բաժիններին.

- ֆինանսական կայունության,
- Մարդկային ռեսուրսների կառավարում և կարողությունների զարգացում,
- Ռազմավարական պլանավորում,
- Ծառայության մատուցման պլանավորում և իրականացում:

Ուսուցումներ և վերապատրաստումներ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2013թ.-ի ընթացքում վերապատրաստել է 78 քաղաքացիական և 30 համայնքային ծառայող: Այսպիսով, 2011-2013 թ.թ. կենտրոնում վերապատրաստված համայնքային և քաղաքացիական ծառայողների ընդհանուր թիվը կազմեց 508 հոգի:

Քաղաքացիական ծառայողները վերապատրաստվել են «Միջանձնային հարաբերությունները, տեղեկատվության ազատությունը և հասարակայնության հետ կապերի ապահովումը տեղական ինքնակառավարման համակարգում» վերապատրաստման ծրագրով: Երկօրյա վերապատրաստման ավարտին մասնակիցներին տրվել է պետական նմուշի վկայագրեր: Դասընթացն իրականացվում էր ԻԱԿ-ի կողմից ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ Խորհրդի ապրիլի 17-ի N 305-Ա որոշմամբ հաստատված ուսումնական ծրագրի համապատասխան:Վերապատրաստման դասընթացից առաջ և հետո քաղաքացիական ծառայողները լրացրել են Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կազմած հարցաթերթերը: Վերջիններս ներառում էին հարցեր, որոնք կոչված են պարզելու նախ՝ տարբեր գերատեսչություններ ներկայացնող քաղծառայողների՝ տեղեկատվության ազատության վերաբերյալ ունեցած գիտելիքը, առանձին մարմիններում տեղեկատվության տրամադրման համար սահմանված ներքին կարգը, ապա նաև ստուգելու արդեն տրամադրված նյութի յուրացումն ու դրա կիրառումը աշխատանքում: Դասընթացից հետո ԻԱԿ-ն ամփոփել և վերլուծել է լրացված հարցաթերթիկները: Թե որքանով են տեղեկացված ՏԱ օրենքն ամեն օր կիրառող քաղծառայողները մեր երկրում, և թե ինչ կարծիք կամ դիրքորոշում ունեն նրանք ոլորտին առնչվող վիճահարույց կետերի վերաբերյալ կարելի է իմանալ ծանոթանալով ԻԱԿ վերլուծությանը: ԻԱԿ-ն ամփոփել է նաև մասնակիցների կողմից ուսուցման գնահատման արդյունքները:

2013 թ.-ի օգոստոսի 26-27-ին ԻԱԿ-ն անցկացրեց երկօրյա վերապատրաստման դասընթաց իրավաբանների համար «Տեղեկատվության ազատության դատական պաշտպանություն» թեմայով: Ծրագիրը նախատեսված էր 4 իրավաբանների համար: Դասընթացը հնարավորություն տվեց մասնակիցներին ոչ միայն ստանալու ՏԱ իրավունքի, դրա խախտման համար պատասխանատվության և դատական պաշտպանության մասին ընդհանուր գիտելիքներ, այլև ծանոթանալու ՏԱ ոլորտում ՀՀ դատական պրակտիկային: Իրավաբանների քննարկման հիմքում ԻԱԿ-ի 2003-2013 ռազմավարական դատավարության օրինակներն էին:

2013 թ.-ի սեպտեմբերին տեղեկատվության ազատության վերապատրաստման դասընթաց է կազմակերպվել նաև քաղաքացիական ակտիվիստների համար: «Ուսուցանում ուսուցանողների համար» ձևաչափով դասընթացին մասնակել են ՀՀ 8 տարբեր մարզերի 50 իրավապաշտպան ՀԿ ներկայացուցիչներ և լրագրողներ: Ուսուցման ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան ոչ միայն ծանոթանալու վերապատրաստելու մեթոդաբանությանը, քննարկելու վերապատրաստողի դերը և հմտությունները վերապատրաստման ընթացքում, այլև ամփոփ տեղեկություններ ստանալու տեղեկատվության ազատության ոլորտում ՀՀ դատական պրակտիկայի մասին, ուսումնասիրելու ՏԱ դատական ոլորտում հայաստանյան հաջողված պատմություններն ու հասկանալու, թե ինչ դեր են ունեցել, ունեն և կարող են ունենալ քաղաքացիական ակտիվիստները ՏԱ ոլորտում ռազմավարական դատավարության ստեղծման գործում:

Ռազամավարական դատական գործեր

2003 թ.-ից մինչ օրս Ինֆորմացվիայի ազատության կենտրոնի նախաձեռնությամբ հարուցվել է 42 դատական գործ՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի ոտնահարման վերաբերյալ: 2013 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ գործերից 37-ն ամբողջությամբ ավարտվել է, 5 գործ դեռևս ընթացքի մեջ է:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացնում է տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական գործեր այն պաշտոնյաների դեմ, ովքեր խախտում են քաղաքացիների տեղեկատվություն ստանալու իրավունքը, անպատասխան են թողնում ՏԱ հարցումները կամ տրամադրում են ոչ ամբողջական կամ թերի տեղեկություն: ՏԱ մասին դատական գործերը դրականորեն են ազդում տեղեկատվության ազատության վիճակի վրա՝ զերծ պահելով պաշտոնյաներին խախտում կատարելուց: Այս գործընթացի շնորհիվ աստիճանաբար ձևավորվում է տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական նախադեպային պրակտիկա:

2013-ին ԻԱԿ-ը նախաձեռնել է 4 գործ՝ ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության, ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի, ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի, ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության նախարարության: 2013 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործերից 3-ը ընթացքի մեջ են: ,ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Ազգային ժողովիե գործն ավարտվել է ԻԱԿ-ի հաղթանակով:

ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի

2012 թ. նոյեմբերի 22-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ Ազգային ժողովին եւ խնդրել էր տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Տեղադրվա՞ծ են արդյոք ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.parliament.am-ում, ՀՀ ԱԺ նախագահի կարգադրությունները,
2. Խնդրում ենք տրամադրել ՀՀ ԱԺ նախագահի 2012 թ. առաջին կիսամյակի կարգադրությունների պատճենները:

Հարցման պատասխանը չստանալով՝ 2012 թ. դեկտեմբերի 5-ին ԻԱԿ-ը տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում է ներկայացրել ԱԺ-ին՝ կրկին խնդրելով տրամադրել հայցվող տեղեկատվությունը: Նույն օրը՝ 05.12.2012 թ.-ին, ստացվել է ԱԺ էլեկտրոնային պատասխանն այն մասին, որ տեղեկատվությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, եւ այն կտրամադրվի 30-օրյա ժամկետում: 2013 թ.-ի մարտի 4-ին՝ հարցումն ուղարկելուց ավելի քան 3 ամիս անց, ՀՀ Ազգային ժողովը տրամադրեց թերի պատասխան, քանի որ ԱԺ-ն ներկայացրել էր ՀՀ ԱԺ նախագահի 2012 թ. առաջին կիսամյակի կարգադրությունները՝ ըստ հերթական համարների չներկայացնելով 12 կարգադրությունների պատճեն: 2013 թ.-ի մարտի 7-ին ԻԱԿ-ը կրկին հարցմամբ դիմեց ԱԺ-ին՝ խնդրելով տրամադրել նաեւ չտրամադրված կարգադրությունների պատճենները: Սակայն, ԱԺ-ն մերժեց տրամադրել դրանք՝ պատճառաբանելով, որ տվյալ կարգադրությունները պարունակում են աշխատողի վերաբերյալ անձնական տվյալներ: 2013 թ.-ի ապրիլի 8-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հայց ներկայացրեց ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի՝ վիճարկելով ՀՀ ԱԺ-ի մերժումը: Դատական առաջին նիստը տեղի ունեցավ 2013 թ.-ի հուլիսի 3-ին: Արդյունքում, մի քանի դատական նիստերից հետո, 2013 թ.-ի դեկտեմբերի 28-ին ՀՀ վարչական դատարանը վճիռ կայացրեց, որով բավարարեց ԻԱԿ-ի հայցը մասնակի: Դատարանը ճանաչեց ԻԱԿ-ի տեղեկատվություն ստանալու իրա-

վունքի խախտման փաստը՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի 2012 թվականի թիվ Կ-13-Ա, Կ-19-Ա, Կ-49-Ա, Կ-66-Ա կարգադրությունների պատճեները տրամադրելը մերժելու մասով՝ պարտավորեցնելով ՀՀ ԱԺ-ին ԻԱԿ-ին տրամադրել վերոհիշյալ կարգադրությունների պատճեները: Դատարանը որոշեց նաև ՀՀ Ազգային ժողովից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 4.000 դրամ՝ որպես պետական տուրքի գումար և ևս 50.000 դրամ հօգուտ հայցվորի՝որպես հայցվորի կողմից ներկայացուցչին վճարված դատական ծախսի փոխհատուցում:

■ ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության

2013 թ.-ի փետրվարի 11-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ Կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայությանը: 2013 թ.-ի փետրվարի 21-ին ԱԱԾ-ն տրամադրել է թերի պատասխան: 2013թ.-ի մարտի 7-ին տեղեկություն ստանալու գրավոր կրկնակի հարցմամբ Կենտրոնը նորից դիմեց ԱԱԾ-ին՝ սակայն կրկին ստացավ նույն թերի պատասխանը:

Արդյունքում, 2013 թ.-ի ապրիլի 5-ին ԻԱԱԿ-ը հայց ներկայացրեց ՀՀ Վարչական դատարան՝ դատարանից խնդրելով ճանաչել Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի՝ տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման փաստը և պարտադրել ԱԱԾ-ին ԻԱԿ-ին տրամադրել սպառիչ տեղեկատվություն:

Դատաքննությունն ավարտվեց, դատարանը իր վճիռը հրապարակեց 2013թ.-ի սեպտեմբերի 19-ին: Դատարանը վճռեց մերժել ԻԱԿ-ի հայցը՝ գտնելով, որ հարցմամբ դիմելու պահին ԱԱԾ-ն չի տիրապետել պահանջվող տեղեկությունները: ԻԱԿ-ը բողոքարկել է դատարանի վճիռը վերաքննության կարգով, քանի որ անգամ տեղեկությունը չունենալու կամ դա տրամադրելու լիազորություն չունենալու դեպքում ըստ ՏԱ մասին ՀՀ օրենքի ԱԱԾ-ն պարտավոր էր այդ մասին գրավոր հայտնել ԻԱԿ-ին, ինչը չի արել, որով և խախտել է ԻԱԿ-ի՝ տեղեկություն ստանալու սահմանադրական իրավունքը, սակայն այս հանգամանքին դատարանը վճռով չի անդրադարձել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը 2014 թ.-ի փետվարի 12-ին որոշել է ԻԱԿ-ի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի՝ ամբողջությամբ բեկանելով ՀՀ վարչական դատարանի 2013 թ.-ի սեպտեմբերի 19-ի վճիռը և վարչական գործի վարույթը կարճել: Այլ կերպ ասած՝ դատարանը գտել է, որ ԻԱԿ-ի ներկայացրած հայցապահանջները վարչական դտարանն ի սկզբանե չպետք է քններ: Դատարանի այս դիրքորոշման հետ ԻԱԿ-ը համաձայն չէ և որոշումը բողոքարկելու է վճռաբեկության կարգով:

■ ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաներիկենտրոնի

2013 թ.-ի մայիսի 7-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին:

2013 թ.-ի մայիսի 18-ի գրությամբ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնը մերժեց տրամադրել խնդրված տեղեկությունները՝ հայտնելով, որ խնդրվող տեղեկությունները՝ տեղեկությունների մատչելիության սահմանափակումների հաշվառմամբ, հնարավոր կլինի տրամադրել տվյալ տեղեկությունը ստանալու համար օրենքով սահմանված վճարումը կատարելուց հետո: ԻԱԿ-ը սա համարեց անհիմն մերժում, քանի որ տեղեկատվության համար վճարի պահանջը հակասել է ՏԱ մասին ՀՀ օրենքով տեղեկատվության տրամադրման համար վճար գանձելու պայմաններին:

2013թ.-ի օգոստոսի 19-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմեց ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի՝ դատարանին խնդրելով պարտավորեցնել տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնին տրամադրել Մաշտոցի պողոտայի Փակ շուկայի նկատմամբ սեփականության կամ փակ շուկայի վարձակալության հիմքերի վերաբերյալ տեղեկատվությունը անվճար կամ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պայմաններով, այն է՝ տեղեկատվության 10 էջը գերազանցող յուրաքանչյուր էջի համար՝ տեղեկության տրամադրման ծախսերը չգերազանցող գումարի դիմաց: 2013 թ.-ի դեկտեմբերի 20-ին տեղի ունեցած առաջին դատական նիստին պատասխանողի ներկայացուցիչը չէր ներկայացել: Դատական հաջորդ նիստը տեղի կունենա 2014 թ.-ի մարտին:

ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության նախարարության

2013 թ.-ի ապրիլի 3-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ քաղաքաշինության նախարարությանը՝ խնդրելով տրամադրել 2012 թ.-ի երկրորդ կիսամյակում ՀՀ քաղաքաշինության նախարարության կարիքների համար մեկ անձից կատարված գնումների պայմանագրերի պատճենները:

2013 թ.-ի ապրիլի 18-ին թվագրված գրությամբ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը մերժել էր տրամադրել պայմանագրերի պատճենները՝ պատճառաբանելով, որ դրանք պարունակում են առեւտրային գաղտնիք այն կազմակերպությունների վերաբերյալ, ում հետ կնքվել են պայմանագրերը: ԻԱԿ-ը սա համարել է անհիմն մերժում, մի կողմից, խոսքը գնում է պետական գնումների եւ պետական բյուջեից ծախսվող գումարների մասին, մյուս կողմից՝ մեկ անձից կատարված գնումների պայմանագրերը հրապարակային փաստաթղթեր են, բազմիցս (տարբեր տարիների համար) հրապարակվել են տարբեր մարմինների, այդ թվում՝ բոլոր նախարարությունների կողմից: Ուստի, չի կարող պայմանագրում կազմակերպության վերաբերյալ տեղեկությունը մի դեպքում համարվել գաղտնիք, մյուս դեպքում՝ ոչ:

Այս հիմնավորմամբ ԻԱԿ-ը 2013 թ.-ի հունիսի 24-ին տեղեկություն ստանալու կրկնակի հարցմամբ դիմել էր ՀՀ քաղաքաշինության նախարարությանը, սակայն ԻԱԿ-ի երկրորդ նամակը ևս արժանացավ նույն արձագանքին:

2013 թ.-ի սեպտեմբերի 3-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմեց ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ քաղաքաշինության նախարարության եւ ընդդեմ ՀՀ քաղաքաշինության նախարար Սամվել Թադեւոսյանի՝ դատարանին խնդրելով ճանաչել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ տեղեկություն ստանալու իրավունքի խախտման փաստը, պարտավորեցնել նախարարությանը տրամադրել 2012 թ.-ի երկրորդ կիսամյակում ՀՀ քաղաքաշինության նախարարության կարիքների համար մեկ անձից կատարված գնումների պայմանագրերի պատճենները, ինչպես նաեւ ՀՀ քաղաքաշինության նախարար Սամվել Թադեւոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ ԻԱԿ-ի առաջին հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 30.000 ՀՀ դրամի չափով, իսկ կրկնակի հարցմամբ պահանջվող նույն տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 50.000 դրամի չափով: Գործը գտնվում է վարույթի ընդունելության փուլում:

2013 թ.-ի ընթացքում ավարտվել է նախորդ տարիներին նախաձեռնած 3 դատական գործ: Դրանք են՝ ԻԱԿ-ն ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի, ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի դեմոկրատական կուսակցության, ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ՖՆ Լիցենզավորման գործակալության և ՀՀ ՖՆ Ֆինանսական վերահսկողության տեսչության:

■ ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի դեմոկրատական կուսակցության

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 25.04.2012 թ.-ին տեղեկատվություն ստանալու գրավոր հարցում էր ուղարկել Հայաստանի դեմոկրատական կուսակցության ղեկավար Արամ Սարգսյանին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը 25.04.2012 թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
2. Ծախսած գումարներից որքա՞ն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:

ՀԴԿ-ն ԻԱԿ-ի հարցումը թողել էր անպատասխան: 16.05.2012 թ-ին ԻԱԿ-ը կրկնակի հարցում է ուղարկել Հայաստանի դեմոկրատական կուսակցությանը, որը նույնպես մնացել է անպատասխան: Արդյունքում, 2012 թ.-ի հուլիս 2-ին Կենտրոնը հայցով դիմեց Երեւան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան? խնդրելով պարտավորեցնել ՀԴԿ-ին 5-օրյա ժամկետում տրամադրել ամբողջական տեղեկատվություն: 2012 թ.-ի դեկտեմբերի 21-ին դատարանը հրապարակեց իր վճիռը, որով ամբողջությամբ բավարարեց ԻԱԿ-ի պահանջը: Դատական ծախսերի փոխհատուցման, մասնավորապես՝ ԻԱԿ-ի կողմից փաստաբանին վճարված վարձատրության գումարի փոխհատուցման պահանջը դատարանը բավարարեց մասնակի՝ պարտավորեցնելով պատասխանողին փոխհատուցել ԻԱԿ-ի կողմից վճարված պետական տուրքի գումարը եւ փաստաբանի վարձատրության գումարի մի մասը՝ 100.000 դրամ:

2013 թ.-ի մայիսի 24-ին ՀԴԿ-ն բողոքարկեց ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը վճռաբեկության կարգով: Սակայն, 2013 թ.-ի հունիսի 26-ին կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը վերադարձրեց ՀԴԿ-ի վերաքննիչ բողոքը: Այսինքն, ԻԱԿ-ի օգտին կայացված՝ Երեւան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճիռը մնաց ուժի մեջ, եւ ԻԱԿ-ը վերջնականապես հաղթեց այս գործը՝ վերականգնելով տեղեկություն ստանալու խախտված իրավունքը: ՀԴԿ-ն պարտավորվեց ոչ միայն տրամադրել ԻԱԿ-ի պահանջած տեղեկատվությունը, այլև փոխհատուցել ԻԱԿ-ի կողմից վճարված պետական տուրքի եւ փաստաբանի վարձատրության գումարը՝ 100.000 դրամի չափով:

■ ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ՖՆ Լիցենզավորման գործակալության եւ ՀՀ ՖՆ Ֆինանսական վերահսկողության տեսչության

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 29.05.2012 թ.-ին տեղեկատվություն ստանալու հարցումներ էր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալության պետ Կարեն Թամազյանին և Ֆինանսական վերահսկողության տեսչության պետ Սոնա Ղարիբյանին՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ տեսչության աշխատակիցներին տրամադրված պարգևատրումների վերաբերյալ:

Ի պատասխան ԻԱԿ-ի հարցմանը՝ ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացվել էր թերի պատասխան: Ուստի 23.06.2012 թ.-ին ԻԱԿ-ը կրկին հարցումներ է ուղարկել՝ խնդրելով տրամադրել ամբողջական եւ սպառիչ տեղեկատվություն:Ի պատասխան կրկնակի հարցումներին՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է գրություն, որով, հղում կատարելով ՀՀ աշխատանքային օրենսգրքին, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքին և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին, մերժվել է հարցումների 2-րդ կետով խնդրված տեղեկատվության տրամադրումը, այն պատճառաբանությամբ, որ դա աշխատողի անձնական տվյալի վերաբերյալ տեղեկատվություն է: Արդյունքում, 2012 թ.-ի հուլիսի 24-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հայցով դիմել է ՀՀ վարչական դատարան:

2013 թ.-ի մարտի 20-ին ՀՀ վարչական դատարանը հրապարակեց իր վճռը, որով ամբողջությամբ մերժեց ԻԱԿ-ի հայցը: 2013 թ.-ի հունիսի 1-ին ԻԱԿ-ը բողոքարկեց է ՀՀ վարչական դատարանի վճիռը ՀՀ վերաքննիչ վարչական դատարան: Դատական նիստը տեղի ունեցավ 2013 թ.-ի հոկտեմբերի 10-ին: Նշենք, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը դատաքննության ընթացքում տրամադրել էր դատական գործի առարկա դարձած տեղեկությունները, ուստի նիստի ժամանակ ԻԱԿ-ը հաշտություն կնքեց պատասխանողների հետ: Դատարանն իր վճիռը հրապարակեց 2013թ.-ի հոկտեմբերի 17-ին, որով, հաշվի առնելով կողմերի հաշտությունը, կարճեց դատական գործը:

■ ԻԱԿ-ն ընդդեմ «Համալսարաններ» համատիրության

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 13 հունիսի 2011 թ. 143-ի 8 թվագրմամբ և 30 հունիսի 2011 թ. 145-ի 3 թվագրմամբ գրավոր հարցումներ էր կատարել «Համալսարաններ» համատիրության նախագահ Արմեն Թադևոսյանին՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ: ԻԱԿ-ի հարցումները մնացել էին անպատասխան:

2011 թ. դեկտեմբերի 8-ին Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում դատավոր Ա. Մելքումյանի նախագահությամբ տեղի ունեցավ ԻԱԿ-ն ընդդեմ «Համալսարաններ» համատիրության գործով առաջին դատական նիստը: Սակայն համատիրության ներկայացուցիչը ոչ միայն դատարանին չէր ներկայացրել հայցադիմումի պատասխանը, այլ նաև չէր ներկայացել դատական նիստին: Նախնական դատական նիստը հետաձգվեց:

2012 թ.-ի հուլիսի 24-ի որոշմամբ դատական գործը կասեցվեց անորոշ ժամանակով՝ մինչ Արմեն Թադևոսյանի հայտնաբերումը: 2013 թ.-ի հունվարի 8-ի որոշմամբ դատարանը դադարեցրեց հետախուզումը եւ վերսկսեց դատական գործի քննությունը: Դատարանը իր վճիռը հրապարակեց 2013 թ.-ի փետրվարի 14-ին: Դատարանը որոշում ընդունեց պահանջված տեղեկատվությունը տրամադրելու և այն հանրության համար մատչելի տեղում փակցնելու մասին քաղաքացիական գործը կարճել, քանի որ կողմերը կնքել էին հաշտության համաձայնություն, և համատիրությունը տրամադրել էր պահանջած տեղեկությունները:

Հանրային քարոզարշավ

2001թ.ից մինչ օրս Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացնում է հանրային լայն քարոզարշավ տեղեկատվության ազատության խնդիրներին հանրությանն իրազեկելու նպատակով:

Տեղեկատվության ազատության ամենամյա մրցանակաբաշխություն 2013

2003թ.-ից ի վեր՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո ամեն տարի սեպտեմբերի 28-ին՝ Տեղեկատվության ազատության միջազգային օրը, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը կազմակերպում է Տեղեկատվության ազատության «Ոսկե բանալի, Ժանգոտ կողպեք» մրցանակաբաշխություն, որի միջոցով խրախուսվում է պետական մարմինների հրապարակային և բաց աշխատանքը, միաժամանակ քննադատվում փակ և գաղտնի գործունեությունը:

2013թ.-ի սեպտեմբերի 27-ին կայացած ՏԱ մրցանակաբաշխությունը 11-րդն էր: Մրցանակաբաշխության դրական մրցանակը՝ Ոսկե բանալին՝ որպես բաց և հրապարակային աշխատանքի խորհրդանիշ, շնորհվեց հետևյալ անձանց և կազմակերպություններին.

- ՀՀ Ֆինանսների նախարարությանը՝ որպես «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը լավագույնս կիրառած պետական կառավարման մարմին,
- ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգին՝ www.e-register.am՝ որպես տեղեկատվության տրամադրման լավագույն ինտերնետային պաշտոնական կայք,
- «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնին՝ որպես տեղեկություն ստանալու իրավունքը լավագույնս օգտագործած հասարակական կազմակերպություն,
- Panorama.am առցանց լրատվամիջոցին՝ որպես տեղեկատվության ազատության հիմնահարցերն ամենաակտիվ լուսաբանած լրատվամիջոց,
- Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արայիկ Մելքումյանին՝ որպես տեղեկատվության ազատության խախտված իրավունքը վերականգնած դատավոր,
- Իրավապաշտպան Արտակ Զեյնալյանին՝ որպես տեղեկատվութան ազատության խախտված իրավունքի համար ամենահամառ ու հետեւողական պայքարող իրավաբան:

Այս տարի ԻԱԿ-ի երկու հատուկ դրական մրցանակները շնորհվեցին

- ՀՀ Կառավարության աշխատակազմին «Բաց կառավարման գործընկերություն» միջազգային նախաձեռնությանը Հայաստանի Գործողությունների պլանի իրականացման աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար:
- ՀՀ Սփյուռքի նախարարությանը 2013 թ.-ին տեղեկատվության ազատության ամենաշատ էլեկտրոնային հարցումներին ժամանակին և լիարժեք պատասխաններ տալու համար:

Մրցանակաբաշխության բացասական խորհրդանիշը՝ Ժանգոտ կողպեքը, որպես փակ աշխատանքի խորհրդանիշ շնորհվեց.

- 2013 թ. ամենազավեշտալի պաշտոնական պատասխանի հեղինակ մարմիններին՝
    - ՀՀ Քաղաքաշինության նախարարություն,
    - ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,
    - ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարություն,
    - «Փարկինգ սիթի սերվիս» ՓԲԸ:
- Երևանի քաղաքապետարանին՝ որպես քաղաքացիների տեղեկություն ստանալու հարցումներին ամենադանդաղ պատասխանող մարմին,
- ՀՀ Ազգային ժողովին՝ որպես Հայաստանի Հանրապետության ամենափակ գերատեսչություն, որն ամենավատն է կատարում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները

Այս տարի մրցանակաբաշխության արդյունքները որոշել է ոլորտում գործող 8 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից բաղկացած անկախ ժյուրին:

Տեղեկացնենք, որ ժյուրիի անդամներն ամփոփում են իրենց և ԻԱ կենտրոնի մոնիտորինգների արդյունքները, քննարկում են նաև կենտրոնի եռամսյակային Սև ցուցակները, որում ընդգրկվում են տեղեկություն ստանալու իրավունքը խախտած պաշտոնյաներն ու գերատեսչությունները: Յուրաքանչյուր անվանակարգի ընտրության չափանիշները տեղադրված են ԻԱԿ-ի պաշտոնական ինտերնետային կայքում:

«Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» նախաձեռնության պաշտոնական կայքի գործարկում

2013-ին ԻԱԿ-ի նախաձեռնությամբ և անմիջական ջանքերով ստեղծվեց և գործարկվեց «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության հայաստանյան պաշտոնական կայքը՝ www.ogp.am: Երկլեզու էլեկտրոնային հարթակում կարելի է գտնել ինչպես ԲԿԳ նախաձեռնության, այնպես էլ դրա շրջանակում ՀՀ-ի կողմից ստանձնած հանձնառությունների մասին մանրամասն տեղեկություններ: Համապատասխան բաժնում ներկայացված են նաև ԲԿԳ հայաստանյան գործողությունների ծրագրի մշակման և ԲԿԳ շրջանակում ՀՀ մասնակցության գործողությունների ծրագրից բխող աշխատանքները համակարգող աշխատանքային խմբերի անդամների անունները: «Քաղաքացիական հասարակություն» բաժնում տեղադրված են բաց և թափանցիկ կառավարմանը, տեղեկատվության ազատությանը և կոռուպցիայի դեմ պայքարին վերաբերող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված վերլուծությունները, ուսումնասիրություններն ու մշտադիտարկումները:

Բաց կառավարման սկզբունքներին, խնդիրներին անդրադարձող լրատվական նյութեր, հոդվածներ, ԲԿԳ գործընթացները լուսաբանող տեղական և միջազգային նորությունների և միջոցառումների մասին կարող եք տեղեկանալ «Նորություններ և միջոցառումներ» բաժնից, որը պարբերաբար թարմացվում է:

Հրապարակումներ

2013 թ.-ի ընթացքում ԻԱԿ-ը հրապարակել է տեղեկատվության ազատության վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ, ուսումնասիրություններ և վերլուծություններ: Դրանց մեծ մասը հայերեն և անգլերեն լեզուներով տեղ է գտել նաև կազմակերպության ինտերնետային կայքում:

2013 թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հրապտարակել է «Տեղեկատվություն ստանալու իրավունք. դատական գործերի ժողովածու 2011-2013» թվով 3-րդ գիրքը, որտեղ ներկայացված են տեղեկատվության ազատության ոլորտում ՀՀ-ում 2011-2013 թ.թ.-ի ընթացքում ԻԱԿ-ի նախաձեռնած դատական գործերը: Այստեղ կարելի է ծանոթանալ յուրաքանչյուր գործի համառոտ նկարագրությանը՝ գործին առնչվող բոլոր փաստաթղթերով՝ հայցադիմում, դատարանի վճիռ և այլն: Ժողովածուն ներառում է նաև տեղեկատվության ազատության դատական պրակտիկայի վերլուծություն, որում ամփոփվում են տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական պրակտիկայի վիճակագրությունը, հիմնական խնդիրները և դրական տեղաշարժերը: Ժողովածուն հրապարակվել է «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվում է ԱՄՆ ՄԶԳ կողմից:

2013 թ.-ին կենտրոնը հրապարակել է «Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագրի 2 համար: Տեղեկագիրը Հայաստանում միակ մասնագիտացված պարբերականն է տեղեկատվության ազատության հիմնախնդիրների վերաբերյալ: Այն լույս է տեսնում 2001 թ.-ից ի վեր եռամսյակը մեկ անգամ և ներառում է ինչպես տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ վերլուծություններ և հոդվածներ, այնպես էլ հետաքրքիր և օգտակար տեղեկություններ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնյաների մասին, օրինակ՝ պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերում ներառված տվյալների տեղեկանքներ, մարզպետների որոշումներ, մարզպետարանների, համայնքների, Երևանի տարբեր վարչական շրջանների, նախարարությունների տարեկան բյուջեներ և այլն:

2013թ. Ինֆորմացիայի ազատության կենտրոնը մշակեց և հրապարակեց մամուլի և տեղեկատվության ազատության վերաբերյալ լուսանկարների 3-րդ ժողովածուն: Այդ ժողովածուում ներառվել են ԻԱԿ կողմից 2013 թ.-ի մայիսի 3-ին կազմակերպված «Մամուլի ազատություն. տեղեկություն ստանալու իրավունք» ֆոտոցուցահանդեսին մասնակցած բոլոր 70 լուսանկարները և ծաղրանկարները:

2013 թ.-ին հրապարակվեց նաև «Տեղեկատվական վեճերի խորհուրդ. կարծիքների ժողովածու» 2-րդ գիրքը: Տեղեկատվական վեճերի խորհրդի (ՏՎԽ) հիմնական նպատակն է պաշտպանել խոսքի ազատությունը, տեղեկատվության մատչելիությունը, ինչպես նաև անձի արժանապատվությունը և մասնավոր կյանքի իրավունքը՝ այդ իրավունքների իրացման ընթացքում ծագող դատական վեճերի դեպքերում եզրակացություններ կամ հայտարարություններ հրապարակելով, որոնք հիմնված են ՀՀ օրենսդրության, միջազգային իրավական ակտերի և էթիկայի նորմերի վրա: Խորհրդի թվով 2-րդ գիրքը ամփոփում է 2012 թ.-ի հոկտեմբերից 2013 թ.-ի օգոստոսը հրապարակած կարծիքները: Ժողովածուի կիրառական արդյունավետությունը բարձրացնելու և օգտագործումն առավել հեշտացնելու նպատակով կարծիքները թեմատիկ դասակարգման են ենթարկվել: Ժողովածուն կազմել է «ԻՆֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ:

Խորհրդատվություն քաղաքացիներին և լրագրողներին

2013 թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը շարունակել է քաղաքացիներին ապահովել տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ խորհրդատվությամբ: 2013թ. ընթացքում կենտրոնը խորհրդատվություն է տրամադրել 248 քաղաքացու:

Կազմակերպության այս գործունեությունն իրականացնում է 3 ուղղությամբ.

- զուտ խորհրդատվություն պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման, ինչպես նաև այլ տեղեկատվություն տնօրինողներից տեղեկություն ստանալու հնարավորության և կարգի վերաբերյալ,
- գործնական աջակցություն քաղաքացիներին հարցումներ կազմելու հարցում: Այն դեպքերում, երբ քաղաքացիների ուղարկած հարցումները մնացել են անպատասխան կամ պատասխանը եղել է ոչ լիարժեք, Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իր անունից նույնաբովանդակ հարցում է ուղարկել տվյալ տեղեկատվություն տնօրինողին և քաղաքացու համար ստացել պահանջվող տեղեկությունները:
- դատական գործերի պարտաստում և ներկայացուցչություն դատարանում: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հետամուտ է լինում սեփական նախաձեռնությամբ կամ քաղաքացիների համար ուղարկված և անպատասխան մնացած, թերի կամ անհիմն, ոչ ըստ էության պատասխան ստացած հարցումներին՝ փորձելով լրացուցիչ հարցման կամ բանավոր ճշտման միջոցով ստանալ պահանջված տեղեկությունները: Այն դեպքերում, երբ դա չի հաջողվում, ԻԱԿ-ը դիմում է դատարան՝ պահանջված տեղեկությունները ստանալու, ինչպես նաև տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներով:

Խորհրդատվությունն իրականացվել է համացանցի, հեռախոսի և քաղաքացիների կողմից ԻԱԿ գրասենյակ այցելությունների միջոցով:

ՏԱ օրենսդրության կիրառման և կառավարման համակարգի հրապարակայնության մոնիտորինգ

2013 թ.-ի ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տարբեր մարմինների շուրջ 203 գրավոր հարցում է ուղարկել: Հարկ է նշել, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ուղարկած վերոնշյալ հարցումների մի մասն էլ ուղարկվել է ԻԱԿ դիմած քաղաքացիների խնդրանքով՝ նրանց համար տեղեկություն ստանալու նպատակով: Հարցումների և դրանց պատասխանների բովանդակությանը կարելի է ծանոթանալ ԻԱԿ-ի www.givemeinfo.am կայքի միջոցով:

ԻԱԿ-ի ուղարկած հարցումները ոչ միայն հնարավորություն են տալիս պետական մարմիններից ստանալու անհրաժեշտ տեղեկությունները, այլ նաև պատկերացում կազմելու տվյալ մարմնում տեղեկատվության ազատության վիճակի վերաբերյալ: Այս հարցումներին տեղեկատվություն տնօրինող մարիների կողմից ներկայացվող պատասխանների տրամադրման ժամկետների, պատասխան գրությունների ամբողջականության, հարցումների պատասխանը ստանալու գործընթացի վերլուծությունն ել իր հերթին հնարավորություն է տալիս վերհանել տեղեկատվության ազատության ընդհանուր վիճակը, խնդիրներն ու զարգացման միտումները: Հարկ է նշել, որ 2013-ի հարցումների և պատասխանների վերլուծությունը փաստում է՝ այսօր արդեն ՀՀ-ում ՏԱ ոլորտի հիմնական խնդիրը ոչ թե հարցումներն անպատասխան թողնելն է, այլ դրանց որպես կանոն թերի կամ խուսափողական պատասխան ուղարկելը:

Միջոցառումներ

Ֆոտոցուցահանդես՝ նվիրված Մամուլի ազատության օրվան

2013 թ.-ին արդեն երրորդ անգամ Մամուլի ազատության համաշխարհային օրը՝ մայիսի 3-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՀՀ-ում Եվրամիության պատվիրակության, ԱՄՆ Միջազգային զարգացման գրասենյակի և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի հետ համատեղ կազմակերպեց ֆոտոցուցահանդես՝«Մամուլի ազատություն, տեղեկատվություն ստանալու իրավունք» խորագրով: Ցուցահանդեսի նպատակն է անդրադառնալ տեղեկատվություն ստանալու իրավունքի խոչընդոտներին ու հնարավորություններին, և կառավարությանը, մամուլի ներկայացուցիչներին ու ընդհանուր հանրությանը հիշեցնել այս իրավունքին հասնելու գործում իրենց դերակատարման մասին: Ֆոտոցուցահանդեսին մասնակցող 70-ից ավելի լուսանկարներն ու ծաղրանկարները տպագրվել են նաև մամուլի ազատության համաշխարհային օրվան նվիրված հատուկ ֆոտոկատալոգում: Ցուցահանդեսի բացումը տեղի ունեցավ 2013 թ. մայիսի 3-ին և շարունակվեց 7 օր:

«Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» առաջին միջազգային համաժողովը

Հունիսի 14-ին Երևանում անցկացվեց «Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» առաջին միջազգային համաժողովը: «Թափանցիկություն և հաշվետվողականություն. համագործակցություն կառավարության և քաղաքացիական հասարակության միջև» խորագիրը կրող միջոցառումը կազմակերպել էին ՀՀ Կառավարությունը և ,Ինֆորմացիայի ազատության կենտրոնե ՀԿ-ն (ԻԱԿ) ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսական աջակցությամբ: 2011 թ. նոյեմբերից ,Բաց կառավարման գործընկերությունե (ԲԿԳ) գլոբալ նախաձեռնության անդամ երկիր դարձած Հայաստանում սա առաջին հանրային մեծ միջոցառումն էր, որը մի հարկի տակ էր հավաքել շուրջ 150 ներկայացուցիչներ ՀՀ Կառավարությունից, քաղաքացիական հասարակության և ԶԼՄ ոլորտներից, ինչպես նաև միջազգային փորձագետների ԱՄՆ-ից, Բուլղարիայից, Էստոնիայից և Վրաստանից: Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը և Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Հեֆերնը:

Համաժողովը բաղկացած էր 5 թեմատիկ նստաշրջաններից (ԲԿԳ–ն որպես քաղաքացիական հասարակության և կառավարության համատեղ նախաձեռնություն, փորձի փոխանակում, Հանձնառությունից դեպի գործողություն. հասարակության ներգրավվածության մակարդակի բարձրացում, հանրային ռեսուրսների արդյունավետ կառավարում, Տեղեկատվության ազատություն), որոնցից չուրաքանչյուրը նվիրված էր ԲԿԳ հայաստանյան գործողությունների ծրագիրի առանձին հանձնառություններին, դրանց իրականացման ընթացքին: ՀՀ Կառավարության ներկայացուցիչներն առանձին ելույթներով ներկայացրին ԲԿԳ հայաստանյան գործողությունների ծրագրով ստանձնած ՀՀ հանձնառությունների իրականացման ընթացքը, պատասխանեցին ներկաների, այդ թվում նաև ոլորտում ներգրավված ՀԿ ներկայացուցիչների հարցերին: Ի դեպ, վերջիններս համաժողովի ընթացքում հնարավորություն ունեցան հանրությանը ներկայացնելու ԲԿԳ հայաստանյան գործողությունների ծրագրի իրականացման ընթացքի իրենց մոնիթորինգի արդյունքները՝ առանձնացնելով արդեն իսկ առկա ձեռքբերումներն ու այն հիմնական խնդիրները, որոնք շարունակում են մնալ չլուծված:

«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության և դրա շրջանակում Հայաստանի իրականացրած ծրագրերի մասին ավելի մանրամասն կարող եք կարդալ նախաձեռնության հայաստանյան պաշտոնական կայքէջում՝ www.ogp.am:

Բաց կառավարման գործընկերության լոնդոնյան երկրորդ գագաթաժողով

2013 թվականի հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 1-ը Լոնդոնում տեղի ունեցավ Բաց կառավարման գործընկերության երկրորդ համաժողովը: Ավելի քան 1000 ներկայացուցիչներ 60 երկրներից մասնակցեցին համաժողովին: Հայաստանի պատվիրակությունը ղեկավարում էր ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Աշոտ Հովակիմյանը: Պատվիրակության կազմում էին նաև ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի առաջին տեղակալ Տիգրան Գևորգյանը, ՀՀ ԱԳՆ Ամերիկայի վարչության պետ Արման Հակոբյանը, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամ Լիլիթ Պետրոսյանը և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հիմնադիր անդամ Լիանա Դոյդոյայնը:

Լոնդոնյան համաժողովի մասնակիցները, ներառյալ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, բիզնեսմեններ և պաշտոնյաներ, հավաքվել էին միասին քննարկելու բաց կառավարման լավագույն նախաձեռնությունները, ներկայացնելու իրենց երկրների փորձը, ձեռքբերումները և առաջարկելու խնդիրների լուծման արդյունավետ ճանապարհները: Առանձին նիստերում քննարկվեցին տեղեկատվության մատչելիության հարցերը, կոռուպցիայի դեմ ուղղված քայլերը: Անդամ երկրների կառավարությունների ներկայացուցիչները մամուլին և քաղհասարակությանը ներկայացրին նոր Գործողությունների ծրագրերում ներառված հանձնառություններից մի քանիսը: Հայաստանի պատվիրակության ղեկավար, ԱԳՆ փոխնախարար Աշոտ Հովակիմյանը խոսեց ԲԿԳ հայաստանյան նոր գործողությունների ծրագրում ներառված հանքարդյունաբերության էլեկտրոնային շտեմարանի ներդրման մասին:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն իրենց հերթին, կարևորելով կառավարման համակարգի բաց և թափանցիկ լինելը, վեր հանեցին այն խնդիրները, որոնք այսօր նպաստում են կոռուպցիայի տարածմանը: Հիմնական շեշտը դրվեց այն բանի վրա, որ քաղաքացիական հասարակությունը պետք է պահանջատեր լինի և մշտապես հսկողի դերում լինի: Մասնակիցները կոչ արեցին հասարակական կազմակերպություններին համագործակցել կառավարության հետ, պարբերաբար վեր հանել հանրությանը հուզող հարցերը կառավարման տարբեր մակարդակներում և դրանց լուծման իրենց տարբերակներն առաջարկել: ԲԿԳ լոնդոնյան համաժողովի մասին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ ԲԿԳ աշտոնական կայքում՝ http://www.opengovpartnership.org/.

«Ոսկե բանալի և ժանգոտ կողպեք» ամենամյա մրցանակաբաշխություն

2013թ. սեպտեմբերի 27-ին տեղեկատվության ազատության միջազգային օրը նշանավորելու համար արդեն 11-րդ անգամ Երևանում տեղի ունեցավ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի «Ոսկե բանալի և ժանգոտ կողպեք» ամենամյա մրցանակաբաշխությունը: Դրական և բացասական մրցանակակիրների մասին մանրամասն տեղեկություններ կարող եք կարդալ ԻԱԿ-ի կայքում: Մրցանակաբաշխության արդյունքները որոշել է ոլորտում գործող 8 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից բաղկացած անկախ ժյուրին: Հրապարակային և փակ գերատեսչությունների ընտրության չափանիշներին կարող եք ծանոթանալ ԻԱԿ-ի ինտերնետային կայքում՝http://www.foi.am/hy/award-standards/:

Մրցանակաբաշխությունը կազմակերպվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի կողմից՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ:

ՏՎԽ 3-րդ աշխատանքային քննարկում

2013 թ.-ի հուլիսի 5-ին և 6-ին կայացավ Տեղեկատվական վեճերի խորհրդի «Զրպարտություն և վիրավորանք. Տեղեկատվական վեճերի խորհրդի փորձը» թեմայով աշխատանքային քննարկումը ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի աջակցությամբ: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնությամբ իրականացված թվով երրորդ աշխատաժողովի մասնակից լրագրողների և փաստաբանների հիմնական մասը վերջին ժամանակահատվածում զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ դատական գործերի հայցվոր կամ պատասխանող կողմ է եղել:

Այս անգամ աշխատանքնային քննարկման համար կազմակերպիչներն առանձնացրել էին 2 հիմնական թեմա՝ «Հանցագործությունների լուսաբանում. անմեղության կանխավարկած» և «Հեղինակային իրավունքը, զրպարտությունը և վիրավորանքը էլեկտրոնային լրատվամիջոցներում»:

«Հանցագործությունների լուսաբանում. անմեղության կանխավարկած» թեմայով քննարկման ժամանակ մասնակիցները նշեցին, որ անմեղության կանխավարկածի հարցն առավել խնդրահարույց է, երբ խոսքը ոչ թե քրեական այլ քաղաքացիական գործերին է առնչվում: Ներկա բոլոր փաստաբաններն էլ համաձայնեցին, որ հարցի լուծման համար օրենսդրական բացը լրացնելու խնդիր կա և իրենց անմիջական պատրաստակամությունը հայտնեցին նպաստելու, որ անմեղության կանխավարկածը դառնա քաղաքացիաիրավական հարաբերությունների ինքնուրույն օբյեկտ: Նշվեց նաև, որ հաճախ անմեղության կանխավարկածի հետ առնչվող խնդիրները ծագում են լրագրողների ոչ պրոֆեսիոնալ աշխատանքի արդյունքում: Կարծիք հնչեց, որ լրագրողների հիմնական մասը չի էլ պատկերացնում ինչ ազդեցություն ունեն իրենց նյութերը մեղադրվողի հետագա ճակատագրի վրա:

Երևանի մամուլի ակումբի նախագահ, ՏՎԽ անդամ Բորիս Նավասարդյանը, սակայն, կարծիք հայտնեց, որ, ցանկացած լրագրող, ով գոնե մի քանի օր աշխատել է խմբագրությունում, գիտի անմեղության կանխավարկածի մասին: Բանախոսը նշեց սակայն, որ, ցավոք, այսօր լրագրողական ընդհանուր հանրություն և ընդհանուր լրագրողական էթիկա հայաստանյան ԶԼՄ դաշտում չկա. լրագրողները գործում են այն դաշտի խաղի կանոններով, որ դաշտում որ աշխատում են, ուստի միայն լրագրողական էթիկայի և ինքնակարգավորման վրա հույս դնել չի կարելի է և պետք է դրան զուգահեռ և դեռ դրանից առաջ մշակել և կիրառել օրենսդրական կարգավորիչներ:

www.foi.am

www.givemeinfo.am

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Փ. Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ./ֆաքս՝ 560360
Էլ. փոստ՝ foi@foi.am
Ինտ. կայք՝ www.foi.am